

ՀՈՂԻԿ Մ'ԻՍԿ ԿՈՐՍՆՑՆԵԼՈՒ ԻՐԱԿՈՒՆՔ ՉՈՒՆԻՆՔ

Posted on March 31, 2014 by Keghart



Category: [Opinions](#)



Մենք ենք՝ Մեր Ցաւերը Շարքէն

Պարոյր Աղպաշեան, Պէյրուզ, 8 Ապրիլ 2014

Հայ ժողովուրդը դարձեալ դէմ յանդիման է ցեղասպանին, ա՛յն ցեղասպանին, որ հարիւր տարի առաջ իր գործած ու շարունակած ցեղասպանութիւններուն համար ոչ միայն արժանի պատիժը չէ ստացած եւ չէ հատուցած, այլեւ զօրակցութիւնը վայելած է մեծապետական կարգ մը երկիրներու ռազմաքաղաքականութեան:



Արար-աշխարհի սառնասիրտ հայեացքներուն առջեւ, ցեղասպանը անարգել ազատութեամբ մուտք գործեց հայաւան Քեսապը, խաղաղ բնակչութիւնը տեղահանեց, թալանեց, քանդեց ու պղծեց:

Մենք ենք՝ Մեր Ցաւերը Շարքէն

Պարոյր Աղպաշեան, Պէյրուզ, 8 Ապրիլ 2014

Հայ ժողովուրդը դարձեալ դէմ յանդիման է ցեղասպանին, ա՛յն ցեղասպանին, որ հարիւր տարի առաջ իր գործած ու շարունակած ցեղասպանութիւններուն համար ոչ միայն արժանի պատիժը չէ ստացած եւ չէ հատուցած, այլեւ զօրակցութիւնը վայելած է մեծապետական կարգ մը երկիրներու ռազմաքաղաքականութեան:



Արար-աշխարհի սառնասիրտ հայեացքներուն առջեւ, ցեղասպանը անարգել ազատութեամբ մուտք գործեց հայաւան Քեսապը, խաղաղ բնակչութիւնը տեղահանեց, թալանեց, քանդեց ու պղծեց:

1915-ի պատկերը կրկնուեցաւ, երբ (ան)քաղաքակիրթ արեւմուտքին առջեւ ամբողջ ժողովուրդ մը ցեղասպանուեցաւ, տարագրուեցաւ, հայաթափական ու բռնագրաւական բարբարոսութեամբ:

- Այսօրուանը երեկուրնէ տարբեր չէ:
- Երեկուանը այսօրուրնէ տարբեր չէ:
- Նոյն ցեղասպանը, նոյն ցեղասպանութեամբ:
- Նոյն անմարդակային վերաբերմունքը, նոյն «հանդիսատես»ներու դաւադրութեամբ:

Ցեղասպանութեամբ, բռնաբարումներով, արշաւանքներով, յափշտակութիւններով ու կողոպուտներով ՉՅԱԳԵՅԱԾ արիւնարբու թուրքը, նորօրեայ էրտողաններու ու տաւուտօղլուներու վոհմակներով, Քեսապ խուժելով, անգամ մը եւս, ապացուցեց իր վայրենաբարոյ եւ աւազակաբարոյ

դիմագիծը:

Լկտիութիւնը այն աստիճանի հասաւ, որ Թուրքիոյ տիրահռչակ արտաքին գործոց նախարարը, անամօթաբար ու սիւնիքաբար յայտարարեց, թէ պատրաստ է... ընդունելու քեսապցիներ եւ օժանդակութիւն տալու անոնց:

Դժբախտաբար, ոչ մէկ (ան)արժանապատիւ պետութիւն պարկեշտութիւնը ունեցաւ մատնանշելու թրքական գործօնին դատապարտելի միջամտութիւնը, իսկ եթէ եղան քեսապահայութեան նկատմամբ որոշ արտայայտութիւններ, ատոնք մնացին իրենց ընդհանրութեան մէջ, բացի Ռուսաստանէն, որ օրակարգի վրայ պահեց զայն, հարցը հետապնդելու վճռակամութեամբ:

Ի դէպ, այն բոլոր երկիրները (քրիստոնեայ), որոնք իրենց քիթը մխրճեր են Սուրիոյ ներքին հակամարտութեանց մէջ, պահիկ մ'իսկ խայնելու առիթ եւ զգացում չունեցա՞ն, ի տես սուրիացի քրիստոնեաներուն դէմ գործուած հալածանքներուն, սրբատեղիներու աներումին ու տեղահանական գործողութիւններուն, գերազանցապէս փայլելով իրենց համրութեամբ ու հակուրութեամբ, նոյնիսկ ամբարտաւանօրէն շարունակելով ահաբեկիչ ու ռազմամթերք դրկել հոն:

Հալէպի դէմ շղթայագերծուած ահաբեկչական յարձակումները ի՞նչ էին, եթէ ոչ հալէպահայութիւնը ֆիզիքապէս, նիւթապէս ու բարոյապէս *հաշուէյարդարի* ենթարկել, թուրք-թաթարներու, ազերի-չեչէններու մեղսակցութեամբ:

Այս մե՞կն ալ չտեսան, չլսեցին, Ամերիկան եւ իր դաշնակիցները, երբ յոխորտացին ու կը յոխորտան, թէ վարչակարգ պիտի տապալեն, զինելով ահաբեկիչներ, օգնելով ահաբեկիչներու, անմեղներու սպանութեան ու տեղահանութեան գնով:

Այն ինչ որ կարելի չէղաւ իրականացնել այլուր, այժմ Քեսապն է, որ կը դարձուի թիրախ, որովհետեւ ոչ ոք զսպուածութեան ու զգաստութեան կոչ ուղղեց Անքարայի վարիչներուն, իսկ վատայուշ թուրք վարչապետը, որ մինչեւ գլուխը խրուած է գայթակողութիւններու ու չարաշահութիւններու մէջ, թրքական ընտրութիւններուն յաղթանակ արձանագրելու ընչաքաղցութեամբ, ուզեց Քեսապի պարպումով ինքզինք հաստատել, գիտնալով որ ոչ ոք կրնայ հակառակիլ իրեն, յատկապէս քրիստոնեայ (°) աշխարհը, որուն հետ ուներ (եւ ունի) հասարակաց դաւադրական ու շահադիտական ծրագիրներ:

Այս արագ անդրադարձումի լոյսին տակ, արդեօք հայութիւնը, որ դառն փորձութիւններ ունեցած է թրքական *վանտալիզմ*ին հետ ու մորթին վրայ զգացած անոր գազանութիւնները, երբեք կանխատեսումը չունեցա՞ւ նման ստորնագոյն ներխուժումէ մը:

Եթէ ոչ՝ ապա կը նշանակէ թէ ատիկա քաղաքական անհասունութիւն էր, ռազմական կարճատեսութիւն, իրողական միամտութիւն, պարզապէս անոր համար, որ ճիշդ ատոնց հակառակ

սկզբունքներով կամ մեկնակետերով պետք էր գործեր ու վերաբերուէր հայութիւնը, ի վերջոյ խուսափելով թրջական ակնկալուող «անակնկալէ» մը:

Հարցը երբեք առնչուած չէ քեսապահայութեան, ոչ ալ մեր վերոյիշեալ ակնարկութիւնը կ'երթայ անոր, այլ սփիւռքահայ *ազդեցիկ* ոլորտներուն, որոնք սուրիական տագնապը դիտելով արտաքին կողմերէն ու հաղորդակից դառնալով պատահելիք հաւանականութիւններուն, կրնային դիմել համապատասխան նախաքայլերու, լծուիլ նախաձեռնութիւններու, թէկուզէ յուշելու եւ յիշեցնելու կարգով, կազմակերպելու ու կազմակերպուելու հեռանկարով:

Իսկ ատոնք երբեք ալ դժուարութիւն կամ անկարելիութիւն չէին, եթէ որդեգրուէր *աջալուրջ* ու *հետեւողական* մօտեցում, հայաստանեան թէ սփիւռքեան չափանիշերով:

Հայ ժողովուրդը, բարեբախտաբար, ունի այնպիսի միջոցներ ու կազմակերպութիւններ, առիթներ ու կարելիութիւններ, որոնց միջոցով կրնար (ու կրնայ) հասնիլ շօշափելի արդիւնքներու, իր պետական, քաղաքական, կառավարական յարաբերութիւններով, բարեկամութիւններով ու մտերմութիւններով, ջուրը «աղբիւր»ներէն խմելու եւ, ըստ այնմ, վերլուծելու ու կողմնորոշուելու, հոսակ՝ նախապատրաստուելու:

Եթէ այս պատրաստուածութեամբ ու մտածողութեամբ չեն ձեւաւորուած մեր *քաղաքական միտքն* ու *հասունութիւնը*, անխուսափելի պիտի դառնան ցնցումներն ու աղետները, իսկ հայ ժողովուրդը իրաւունք չունի չկանխատեսելու թրջական այս եւ այլ (շարունակելի) ասպատակութիւնները, քանի՛ այլեւս մեզի ԱՐԳԻԼՈՒԹ Է պատառիկ մը հող կորսնցնել, հայրենական թէ հայաւանային, գաղութային թէ համայնքային մակարդակներով:

Ի դէպ, քեսապի իրադարձութիւններու հարցով, Հայաստանի իշխանութիւններու արագ հակազդեցութիւնը՝ տեր ու պաշտպան կանգնելու քեսապի եւ քեսապահայութեան, ընդհուպ՝ խորհրդարանական բարձր աստիճան պատուիրակութիւն մը գործուղելով Դամասկոս ու Լաթաքիա, արժանի է խոր յարգանքի եւ երախտագիտութեան, որովհետեւ *պետական* մակարդակով ալ այս *գերիսնդիրը* արժարժուեցաւ ու հետապնդուեցաւ:

Բարենշելի է, որ հայ ժողովուրդը՝ Հայաստանի թէ Սփիւռքի մէջ, անտարբեր ու կրաւորական չմնաց, այլ՝ իր ներկայութիւնը զգացնել տուաւ, սակայն, որքա՛ն ողջունելի ու ծափահարելի պիտի ըլլար, եթէ անելի *ազդու*, *միասնական* ու *համախումբ* ըլլային, անելի *կազմակերպչական* ու *զանգուածային*, անելի *ծրագրուած* ու *հետեւողական*

Կարելի չէ ընդունիլ, ոչ ալ համակերպիլ կարգ մը խժալուր ծայներու կամ ձախաւեր գրիչներու, որոնք աժան դասեր տալու, խակ վերլուծումներ կատարելու ու եսական տեսակետներ արտայայտելու *սովետատութիւններու* անյաջող փորձութիւններու մատնուեցան, երբ քեսապի վիճակուած ճակատագիրի ծանրակշռութեան հետ, անլրջութեամբ մօտեցան:

- Քեսապը՝ ազգային արժանապատուութիւն է
- Քեսապը՝ հայկական հողատարածք է:
- Քեսապը՝ հայութեան պարծանքն է:
- Քեսապը՝ վերականգնելի է
- Քեսապը՝ անտէր-անտիրական չէ
- Քեսապը՝ քաղաքացիական հաւատարմութեան նմոյշ է
- Քեսապը՝ մնայուն իրականութիւն է

Այս պէտք է ըլլայ մեր հաւատամքը ե՛լ Քեսապի, ե՛լ Այնճարի, ե՛լ որեւէ հայապատկան կամ հայաշատ շրջանի նկատմամբ:

Ասկէ դուրս չի՞ք ճշմարտութիւն:

